Ի ԶԷՅԹՈՒՆԷ (ՈՒԼՆԻԱ).

Ասկէց չորս տարի յառաջ երբ Զէյթուն պըղտորուած էր՝ պապական Հայ վարդապետներ ուզելով Զէյթունի մէջ պապականութիւնը տարածել, հոն եկեղեցի ու դպրոց կառուցանելու և այսպիսի հաստատութիւններով ժողովուրդ որսալու համար գետին մը կփնտռեն, բայց մեր ազգայինք խնամուտ ըլլալով տասնց նպատակին՝ իրենց ստացուածներէն տեղ չեն ծախեր։ Պապականք զանազան միջոցներու կդիմեն՝ հոն գետին մը գտնելու համար, որպէս թէ բազմաթիւ ժողովուրդ ունին և եկեղեցւոյ ու դպրոցի կարօտ են։ Այս միջոցին՝ Զէյթունի կեղրոնը գտնուած գետին մը՝ որ ի վաղուց անտի Հայոց սեփհականութիւնն է, և որոյ վրայ ժամանակաւ ազգային խորհրդարանի շէնք մի կայ եղեր, և ժամանակ անցնելով փլեր, ու վերջերը ծառեր տնկուած ու պարտէզ դարձած է եղեր, - կառավարութեան կվերաբերի ըսուելով՝ աճուրդի կդրուի, և վերջապէս Մարլեան վախճանեալ Պօղոս պէյի վրայ կմնայ 3000 ղրշի, և անոր վրայ կդառնայ։ Պապական վարդապետք ուրախութեամբ կսկսին եկեղեցւոյ և վարժարանի հիմնարկութիւն ընել այս գետնին վրայ՝ որոյ նպատակն ինչպէս քիչ մը յառաջ ըսինք, միայն մարդ որսալ է։

Զէյթունի մեր ազգայինք ամենայն զօրութեամբ բողոքեր են՝ յիշեալ գետինը մեր ազգային սեփհականութիւնն է ըսելով, բայց չեն կրցեր ըսելի ընել տալ, և ստիպուեր են Պատրիարքարանի դիմել՝ հիմնարկութեան սկսուած միջոցին։ Այն ատեն Պատրիարքարանը Բ. Դրան ծանուցանելով՝ և Բ. Դրան, տեղական կառավարութեան ու Պատրիարքարանի մէջ երկար ատեն բանակցութիւն ըլլալէն յետոյ՝ վախճանեալ բարեյիշատակ Ալի փաշա կտեղեկանայ ամեն դարձուածոց և կհրամայէ դադրեցուցանել շէնքը՝ միանգամայն պատուիրելով որ առանց Բ. Դրան վերջին որոշումն առնելու չշինուի որևէ շէնք։ Այսպէս դադրած կըկենար մինչև մեր օրերս։

Արդ՝ այս օրերս պապականք դարձեալ երևան ելնելով՝ կջանան իրենց ձեռնարկութիւնն յառաջ տանելու համար Բ. Դրնէն հրամանագիր հանել. մեր ազգայինք լսելով դարձեալ կբողոքեն և պատրիարքարանն ալ կմիջամտէ. հետևաբար Բ. Դուռը վերատին տեղական կառավարութենէն տեղեկութիւն կուզէ, և պատասխան կառնու թէ նոյն գետինը կառավարութեանն ըլլալով՝ այն ատեն աճուրդի հանուած է. Պատրիարքարանի կհաղորդուի այս տեղեկութիւնը, և ի պատասխանի՝ ծանութիւն կը տրուի Պատրիարքարանէն թէ նոյն գետինը Հայոց սեպհական է, և ժամանակաւ կառավարութեան ընծայել ուզած են կառավարական պաշտօնատան մը շինութեան համար, բայց այսպիսի շինութեան յարմար չհամարուելով ընդունուած չէ և դարձեալ Հայոց մնացած է։ Կըսեմք, թէ Բ. Դուռը Պատրիարքարանի այս ծանօթութիւնը տեղական կառավարութեան հաղորդելէն զատ՝ միանգամայն բացատրութիւն կպահանջէ թէ ինչ՞ու գետինը այն ատեն աճուրդի դրուեր է առանց հաւանութեան Բ. Դրան, և այսչափ յուզման տեղի տրուեր է։

Անհաւասիկ, այսպիսի խնդրով մի յուզեալ են այս օրերս Զէյթունի ազգայինք, և յատկապէս այս խնդրոյն կարգադրութեան համար՝ մայրաքաղաքս եկաւ երկու օր յառաջ Զէյթունի Աբարդեան արժանապատիւ Տ. Գրիգոր վարդապետ։

Փունջ, թ. 797. 8 մայիս 15։

ՆԵՐԵԼ.

Խոստացայ Պարդասիրական ընկերութեան ի դիմաց մի քանի և երկար գրութիւններ ստացած եմք, զորս ամենագրոյս էջից անձկութենէն ստիպեալ չկարողացանք հրատարակել, ուստի և ներել կը խնդրեմք։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։